№ 189 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 **1899** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 № 189

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
յուրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրելի որոշում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դատաստանական դահլիճից. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՈՐՈՇՈՒՄ

«Մշակի» № 187-ում մենք հաղորդեցինք մի շատ կարևոր լուր այն որոշման մասին, որ կայացրել էին Բագու եղած ժամանակ երկրագործութեան միսիտր Երմոլով և առևտրի դեպարտամենտի դերեկտոր Կովալեվսկի բանւորների կենցաղավարութիւնը բարելաւելու նպատակով: Որոշված է յատկացնել երեք կտոր հող բանւորական բնակատեղեր շինելու համար բոլոր այն յարմարութիւններով, որոնք պահանջվում են առողջապահական տեսակէտով: Երկրագործութեան մինիստրութիւնը չէ խնայել յատկացնելու բնակատեղերի համար նաւթաբեր շրջանից մինչև 250 դեսեատին հող:

Այդ համակրելի որոշումը մի վերին աստիճանի մխիթարական երևոյթ է այն բազմաթիւ տխուր և խաւար երևոյթների մէջ, որ տալիս է ծխի և կուպրի աշխարհը: Ապշերօնեան թերակղզում ամեն բան հոգատարութեան առարկայ է դարձել, բացի այն աշխատաւորից, որի մասնակցութեամբ ստեղծվել են և ստեղծվում են միլիոններ և միլիարդներ: Պետութեան որոշումը թէ էական օգնութեան և աջակցութեան մի գործողութիւն է, որ պէտք է ազդի աշխատողների կեանքի բարելաւութեան վրա, և թէ բարոյական պարտականութեան մի օրինակ, որ պէտք է խրատ և դաս դառնայ նաւթարդիւնաբերողների համար, որոնք իրանց ամենօրեայ լարված և եռանդուն որոնումների մէջ տեսնում են միայն նաւթ ու ոսկի և չեն նկատում աշխատող մարդուն: Իսկ նաւթագործները դեռ շատ պարտականութիւններ ունեն առաջիկայում: Բանւորական բնակատեղեր շինելը միայն սկիզբն է այն բոլոր անհրաժեշտ գործողութիւնների, որ պէտք է կատարել աշխատողների վիճակը ապահովելու նպատակով:

Նորերս մի հեղինակ, որ ուսումնասիրել է Գերմանիայի աշխատողների մասին եղած նորագոյն վիճակագրական տեղեկութիւնները, յայտնում է, որ «գերմանական արդիւնագործութիւնը և երկրագործութիւնը տալիս են իւրաքանչիւր տարի սպանվածների և վիրաւորվածների այնպիսի թիւ, որ միայն տեղի է ունենում արիւնահեղ պատերազմի ժամանակ»: Եւ այդ բանը ասված է մի երկրի համար, որտեղ վաղուց մտցրված է գործարանական վերահսկողութիւն և տիրում են օրինակելի կարգեր: Անշուշտ Ռուսաստանում ընդհանրապէս և Անդրկովկասում մասնաւորապէս վնասվող աշխատողների քանակութիւնը աւելի մեծ է և ուրեմն արդիւնագործութեան զարգացման խլած զոհերը աւելի զգալի են:

Խաղաղ և կանոնաւոր առաջադիմութեան համակրող մարդկանց վրա բարոյական մեծ պարտք կայ նուազեցնել վիրաւորների և մեռնողների այն տոկոսը, որ այժմ պատերազմի զոհերից, ինչպէս ասեցինք, աւելի է: Այդ մասին պէտք է հոգան ոչ միայն պետութիւնը, ոչ միայն այն հաստատութիւնները, որոնք մտածում են ազգաբնակութեան բարեկեցութեան վրա, այլ և գործարանատէրերը, որոնց հարստութիւնը կազմվում է աշխատողների անմիջական մասնակցութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Քաղաքացին, կարդալով գիւղի հակառողջապահական դրութեան մասին սարսափեցնող նկարագրութիւններ, սովորաբար հանգստացնում է իր խիղճը նրանով, որ ինքը գիւղում չէ ապրում, հետևաբար և գիւղի վատ պայմաններից վնասվողը յամենայն դէպս ինքը չի լինի: Բայց դա մի մեծ սխալ է. և դոկտոր Լադիժենսկի «Приазовскій Край» լրագրում հաստատում է, որ գիւղի վատառողջ դրութիւնը պակաս վնասակար չէ քաղաքացիների համար:

Գիւղացու տունը ներկայացնում է մի հակառողջական բնակարան: Մեր գիւղացիների ուտելեղէն մթերքները ամեն մէկին են յայտնի: Գիւղացիները գնովի շատ քիչ բան ունեն, իսկ այն մթերքները, որ նրանք տանում են քաղաքները, յաճախ հանված են լինում այնպիսի տներից, ուր վարակիչ հիւանդներ կան. այդ բանը քաղաքի սանիտարական հսկողութեան համար կատարեալ գաղտնիք է մնում: Կաթի, ձուների, դեռնախնձորի և այլ մթերքների հետ ամեն օր քաղաք են բերվում մեծ քանակութեամբ զանազան ախտածին սաղմեր, որոնք առաջացնում են զանազան հաճաճարակներ, գլխաւորապէս մանկական հիւանդութիւններ: Կարելի է արդեօք որ և է հսկողութիւն այս բանի դէմ և ինչպէս կազմակերպել այդ հսկողութիւնը:

Անկարելի է: Ոչ մի հսկողութիւն, որքան էլ խիստ լինի նա, չէ կարող արգելել, որ գիւղացին իր բերած մթերքների մէջ քաղաք չը մտցնէ հիւանդութեան սերմեր: Ուրեմն, պէտք է այնպէս անել, որ այդ հիւանդութիւնների պատճառները տեղնուտեղը, այսինքն գիւղում, ոչնչացվեն, պէտք է առողջացնել գիւղը: Իսկ առողջացնել կարելի է, բարւոքելով գիւղի մնտեսական դրութիւնը, բարձրացնելով գիւղացու կուլտուրական կրթութիւնը, այլ և բժշկական օգնութիւնը աւելի լայն հիմքերի վրա դնել գիւղերում: Եւ այսպէս, ուր որ նայում էք, տեսնում էք, որ ամեն ինչ—թէ ընդհանուր ժողովրդական շահերը և թէ իւրաքանչիւր անհատի անձնական օգուտը պահանջում են մի և նոյն բանը—որ պէտք է միասին գործել, որ կարողը անկարողի համար պիտի մտածէ և չը կայ անձնական բարեկեցութիւն առանց ընդհանուր, հաւաքական բարեկեցութեան...

*

Հէնց որ ծպուտ էք հանում անաժամ բէկլամներով ապրող մամուլի մասին, իսկոյն, համարեա ամենից առաջ, տարածվում են Տիգրան Նազարեանի հեծեծանքները: Այստեղ, ի հարկէ, առաջնակարգ դեր է կատարում այն հոգեբանական դրութիւնը, որ այնքան գեղեցիկ կերպով արտայայտում է ժողովուրդը՝ «գող—սիրտը դող» ասացուածքով: Անցեալ շաբաթ մենք մի քանի դառն ճշմարտութիւններ ասացինք բէկլամների տխուր հերոսների մասին, մինչդեռ Տիգրան Նազարեան նոր էր վերադարձել արտասահմանից, բեռնաւորված այն նօտարական պայմաններով, որ նա կապել է արտասահմանի բոլոր ֆիրմաների հետ՝ «Տարազին» անթիւ բանակութեամբ կլիշէներ և ամեն տեսակ պատկերազարդ բարիքներ հասցնելու մասին: Բայց մենք գիտէինք, որ գեղարուեստի միակ ներկայացուցիչ «Տարազի» համար, ինչպէս ասում է բանաստեղծը, «երէկը կրկնվում է միշտ այսօր», գիտէինք, որ արտասահմանեան ֆիրմաները ամեն տարի են քափ ու քրտինք թափում Տիգրան Նազարեանցի տուած պատուէրները կատարելու համար, պատուէրներ, որոնց թաղն ու պարծանքը այն հրեշտակներն են, որոնք ինչ-որ արաբական քաղաքի թէ քարվանսարայի վրա երգում են «էջ Միածին ի հօրէ» (Տես «Տարազ» № 37): Այդ պատճառով մենք կարող էինք բոլորովին հանգիստ կերպով ճառել անաժամ բէկլամի մասին, որ այնպէս անխնայ փչացնում է մեր խեղճ գրականութիւնը: Տիգրան Նազարեան չտապեց գոնէ այն ասել, որ անաժամ բէկլամը առնուազն մի անմեղ գառնուկ է: Լաւ, ասում են մեզ «Տարազի» գեղարուեստական աւերակների տակից, դուք բէկլամներ չէք անում, բայց ուր է ձեր առաջ բերած գրականութիւնը: Խեղճ Տիգրան Նազարեանցին դարձեալ մոլորեցրել են նրանք, որոնք այնքան կարօտ են նրա բէկլամներին՝ գրական փառք վաստակելու համար: Նրան դարձեալ հաւատացրել են, որ գրականութիւնն էլ, գեղարուեստն էլ, ամեն ինչի սկիզբն էլ, վերջն էլ ուրիշ ոչ ոք չէ, եթէ ոչ «Տարազը» իր «էջ Միածին» երգող հրեշտակներով. եթէ դրութիւնը ուրիշ կերպ լինէր, այն ժամանակ Տիգրան Նազարեանին մենք կարող էինք ասել շատ բան. և մեր ասելիքների մէջ առաջինն այն կը լինէր, որ եթէ ոչինչ էլ չանենք, բաւական է և այն, որ հայ հասարակութիւնը մեր շնորհիւ կարող է ասել, թէ ինչ բան է գրական չարչիների համար փէչակ դարձած կեղտոտ բէկլամը: Դա ծառայութիւն է, բայց, ի հարկէ, ոչ թէ բէկլամիստների համար. և մենք շատ լաւ ենք հասկանում, թէ որտեղից է դուրս գալիս այն սապնափրփուրը, որից բէկլամի հերոսները գնդակներ են կազմում մեզ դէմ ամեն անգամ, երբ մենք այդ հերոսների դէմ ենք շպրտում «անաժամ» բառը...

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Սեպտեմբերի 22-ին, Սիմֆերօպոլ քաղաքում, ինչպէս արդէն հաղորդեցինք, նահանգական դատարանը երդուեալների մասնակցութեամբ քննեց թիւրքահայ Գրիգոր Գուգուլեանի գործը: Բերում ենք դատավարութեան մանրամասնութիւնները, քաղելով ռուսաց լրագիրներից:

Նախագահում էր դատարանի անդամ Ա. Սմիրնով, մեղադրում էր պրոկուրօրի օգնական Բելեավսկի, պաշտպանում էր մեղադրվողին երդուեալ հաւատարմատար Կօրօչեվսկի: Դահլիճը լի է բազմաթիւ հասարակութեամբ: Նիստը սկսվեց առաւօտեան ժամը $10^1/_2$-ին: Մեղադրվողների նստարանի վրա նստած է Գրիգոր Գուգուլեանը, որ մոտ 27 տարեկան մի թուխ երիտասարդ է, արևելեան գիւղի բնորոշ յատկութիւններով:

Նախագահը թարգմանի միջոցով մի շարք հարցեր է տալիս մեղադրվողին: Վերջինս պատասխանում է, որ թիւրքաց Հայաստանիցն է, ամուրի, ութ ամսից ի վեր ապրում է Ռուսաստանում:

Կարդացվում է մեղադրական ակտը: 1898 թ. մարտի վերջին, թիւրքահպատակ, օսմանեան կայսրութեան Էրզրումի նահանգի Բաբերդ քաղաքի բնակիչ թիւրք Հասան Բաթաս Միմի օղլին գալիս է Սիմֆերօպոլ իր գործերով և իջևանում է հայ Կարապետ Մանուչարեանցի սրճարանում: Ապրիլի 27-ին, երեկոյեան, Հասանը գտնվում էր իր բնակարանին մոտ մի ճաշարանում, որ պահում է Ահմէդ Ալի օղլին. այդտեղից, ընթրիքից յետոյ, ժամը մոտ 11-ին, իր ծանօթների հետ գնում է իր սրճարանը սուրճ խմելու, բայց ճանապարհին, մի ցանկապատի ետևից, յանկարծ ցատկում է մի անծանօթ մարդ, յարձակվում է Հասանի վրա, մի հօսք անգամ չարտասանելով և խանչալով հարուած է հասցնում նրա ձախ կողքին ու փախչում է, սակայն ոստիկան Կրեմնէվը վրա է հասնում անմիջապէս և բռնում նրան արիւնաթաթախ խանչալը ձեռքին, Հասանի հետ եղած ընկերների օգնութեամբ: Հասանը, արիւնաքամ լինելով, ընկաւ հէնց տեղն ու տեղը և հոգին փչեց փողոցում: Դատաստանական-բժշկական անդամահատութիւնը ցոյց տուեց, որ հարուածը ծակել է ձախ թոքը, սիրտը և շնչափողը: Ձերբակալված Գրիգորը խոստովանեց Հասանի սպանութիւնը և յայտնեց, որ Սիմֆերօպոլում ապրում է երեք ամսից ի վեր, զբաղվում է կօշկակարութեամբ, իսկ Թիւրքիայից փախել է ընդհանրապէս Ռուսաստան դեռ 1895-ին, հայկական անկարգութիւններից յետոյ, երբ նա կորցրեց հօրը, երկու եղբայրներին, որոնց Հասանը իր աչքի առաջ մորթոտեց Բաբերդում: Երբ Հասանը երևան եկաւ Սիմֆերօպոլում, Գրիգորի սրտի մէջ եռաց իր հարազատների սպանութեան վրէժխնդրութեան զգացումը և այդ զգացումը դրդեց նրան սպանել Հասանին. այդ նպատակով նա գնեց մի խանչալ և հետամուտ եղաւ Հասանին, յարմար առիթ որոնելով իր նպատակն իրագործելու համար: Ապրիլի 28-ին, նա, զինաւորված խանչալով, թաղնվեց Հասանի բնակարանի մոտ գտնվող ցանկապատի ետևում, սպասելով նրա վերադարձին ճաշարանից և ապա, հէնց որ Հասանը մոտեցաւ իրան, նա յարձակվեց նրա վրա և խանչալը կոխեց ձախ կողքը: Գրիգորի ասելով, նա քաջութիւն չունեցաւ սպանել Հասանին հայրենիքում, թիւրք մարդկանց մէջ:

Մեղադրվողը իրան յանցաւոր է ճանաչում:

Պաշտպանի միջնորդութեան համաձայն, ի նկատի ունենալով, որ մեղադրվողը չը գիտէ ռուսաց լեզուն, կարդացվում է նախնական քննութեան ժամանակ տուած նրա ցուցմունքը:

—Ես ապրում էի իմ հայրենիքում, Բաբերդում—ասում է Գրիգորը—ընտանիքիս հետ, որ բաղկացած էր հօրից, մօրից, երկու եղբայրներից և չորս քոյրերից: Մենք ապրում էինք միասին, խաղաղութեան և առատութեան մէջ, աշխատում էինք. հայրս ատաղձագործ էր, ես և Սարգիս եղբայրս—կօշկակար, իսկ Խաչատուրը—ոսկերիչ: Բայց սկսվեց հայերի հալածանքը և $3^1/_2$ տարի առաջ լուր հասաւ, թէ Տրապիզոնում և ուրիշ քաղաքներում թիւրքերը կոտորում են մեզ, հայերիս, իսկ յետոյ յանկարծ սկսվեց հայերի կոտորածը և Բաբերդում: Կոտորածը տևեց մի օր ու գիշեր և հարիւրաւոր հայեր, անպաշտպան և սարսափահար, ընկան մարդասպանների հարուածներից: Թիւրքերը, ջարդելով դռները, խուժում էին տները, բռնում և մորթում էին բոլոր տղամարդկանց, չը խնայելով և տղաներին: Մեր տունն էս մտաւ թիւրքերի մի խումբ Հասանի առաջնորդութեամբ և նա, իր ձեռքով, աչքիս առաջ, մորթեց ծերունի հօրս և երկու եղբայրներիս: Ես թաղնվեցի դիվանի տակ, բայց տեսնում էի անցած դարձածը և այդ տեսարանի յիշողութիւնն անդամ սարսափեցնում է ինձ: Հայերի կոտորածը կատարվում էր առանձին խմբերով, և ամեն մի խմբի ղեկավարը քաղաքի նշանաւոր թիւրքերից մէնն էր, Հասանի նման: Հայերը փախան Բաբերդից, և ես փախայ Բաթում, ուր մնացի երկու տարի: Ապա սիրտս ուզեց վերադառնալ Բաբերդ տեսնելու համար, թէ ինչ եղան մայրս և քոյրերս: Այդտեղ ես տեսայ մեր անտեսութիւնը՝ աւերված, մայրս, քոյրերս՝ կարօտութեան մէջ: Հայ այլ ևս գրեթէ չը կարաշխատել դժուար էր և ես պէտք է մտածէի առաջ ինքս ոտքի կանգնեմ, և յետոյ, եթէ Աստուած կօգնի, մտածեմ մօրս և քոյրերիս մասին: Մեր հայերից շատերը փախել էին Ղրիմ, ես ևս վճռեցի Ղրիմ գնալ և հասայ Սալտա, ուր ապրում են ազգականներս. անցագիր չունէի, բայց ձեռք բերեցի Թիւրքիա վերադարձող մի հայից: Սալտա չը կարողացայ գործ ճարել, ուստի եկայ Սիմֆերօպոլ. այստեղ ես մտայ Մինասօվի սրճարանը, բնակութիւնս հաստատեցի այդտեղ և սկսեցի կօշիկներ կարել: Գործ որոնելով, ես մտնում էի սրճարանները և յանկարծ տեսայ սրճարանում Հասանին, հօրս և եղբօրներիս սպանողին: Այդ հանդիպումը յուզեց ինձ: Ես յիշեցի սպանվածներին և նրանց վերջին բօպէները, բայց զսպեցի ինձ և ասացի Հասանին. «բարև»: Հասանը հարցրեց ինձ, ո՞վ եմ ես և որտեղից: Ես պատասխանեցի.—Բաբերդից, Գուգուլեան: Նա ասաց. «Ես յիշում եմ այդ ազգանունը»: Այն ժամանակ հարազատներիս վրէժը նրանից առնելու միտքը ցցվեց իմ գլխումս, և ես երկրորդ օրը գնեցի խանչալը: Ապա Գրիգորը պատմում է, թէ ինչպէս դարանամուտ եղաւ Հասանին և սպանեց նրան:

Գրիգորի ցուցմունքը հասարակութեան վրա չափազանց սաստիկ տպաւորութիւն է գործում:

Հարցաքննվում է վկայ, պրիստաւ Լուցենկօն:

Վկան ասում է, որ Գրիգորին բերին ոստիկանական բաժինը սպանութիւնը կատարելուց յետոյ: Գրիգորը չափազանց յուզված էր: Նա

ուշաթափվեց և պէտք եղաւ սառը ջրով սրսկել նրան։ Երբ ուշքի եկաւ, նա ասաց, որ կատարել է սպանութիւն վրէժխնդրութեան համար։

Դրիգորը անուանում է այն վկաներին, որոնք կարող են հաստատել, թէ Հասանը ժորթոտել է իր ընտանիքը և պատմել, թէ ինչպէս կատարվեց կոտորածը։

Պաշտպան.—Ինչի համար Հասանը Սիմֆերօպոլ էր եկել։

—Պարտքերը հաւաքելու համար։ Նա դրամ էր փոխ տալիս թիւրքահայերին և եկել էր յետ ստանալ փոխ տուածը։

Հարցաքննվում է վկայ Արթինով։

Պրօկուրօր.—Դուք ճանաչում էիք Գրիգորին։

—Ոչ։

Պաշտպան.—Ինչի համար Հասանը եկել էր Սիմֆերօպոլ։

—Ես լսել եմ, որ նա այստեղ հաւաքում էր իր պարտքերը և եթէ հայերը չէին վճարում, Հասանն ասում էր, թէ կը գնայ Թիւրքիա և այնտեղ ցոյց կը տայ նրանց։ Նա գնացել էր Խարկով և Օդէսա։

Ահմէդ Ալի օղլին ուղղած հարցին պաշտպանի կողմից, արդեօք ասել է նա հարցաքննութեան ժամանակ, ոստիկանատանը, թէ Հասանը ազդեցիկ անձն էր Թիւրքիայում, որ ունէր իր հրամանի ներքոյ 300 զինաւորված թիւրքեր, նա պատասխանում է. Հասանը նշանաւոր ընտանիքից էր. աղքատներին օգնում էր, կերակրում էր նրանց։

Հարցաքննվում է վկայ Մանուչարեանց։ Վկան հայ է, որ փախել է Բաբերդից, կոտորածից յետոյ։

Պաշտպան։—Քանի տարի էք ապրել Բաբերդում։

—Չորս տարի։

—Ճանաչում էիք Բաբերդում Հասանին։

—Ճանաչում էի։

—Ինչով էր պարապվում Հասանը։

—Նա որոշ զբաղմունք չունէր. նա շատ հարուստ մարդ էր։

—Ինչպէս ազատվեցիք կոտորածից։

—Ես փախայ մտայ մի աղքատի տուն։ Յետոյ մեզ, կենդանի մնացած հայերիս, բանտարկեցին։

Նախագահ.—Ինչի համար։

—Նրա համար, որ մենք կենդանի էինք մնացել։

Պաշտպան.—Այն դէպքը, որի մասին խօսում է վկան, պատմական է։ Վկայի հարցաքննութեամբ չէ կարելի վառ գոյնով պատկերացնել։ Խնդրում եմ թոյլատրել ինձ ներկայացնել պատարանին «Եղբայրական օգնութիւն հայերին» ժողովածուն և «Հայերի վիճակը Թիւրքիայում» գիրքը, և խնդրում եմ ուշադրութիւն դարձնել մի քանի յօդուածների վրա, որոնք մանրամասն նկարագրում են թիւրքական գազանութիւնները։

Դատարանը մերժում է այս միջնորդութիւնը։ Ապա հարցաքննվում է վկաների մի ամբողջ շարք, որոնք փախել են Բաբերդից հայերի կոտորածից յետոյ։ Ամեն մէկի ընտանիքից թիւրքերը սպանել են մի քանի հոգի։ Նրանք սարսափելի տեսարաններ են պատմում, որոնք շատ լաւ ծանօթ են ընթերցող հասարակութեան։

Սիմֆերօպոլում սրճարան պահող վկան ասում է, որ Հասանը չէր վճարում իրան, իսկ ինքն էլ չէր համաձակվում փող պահանջել նրանից, որովհետև վախենում էր։

Երդուեալների աւագը հարցնում է—յայտնի է վկային, որ Հասանը Բաբերդում օգնում էր աղքատներին։

—Ոչ մի օգնութիւն չէր անում։ Երբ մէկի տունն էր մտնում, ամենքը դողում էին։

Պաշտպան.—Որքան տոկոս էր վերցնում Հասանը։ Գուցէ այդ կերպով կարողանանք որոշել նրա բարեգործութիւնները։

—Նա տալիս էր ութ բուբլի մի ամսով և վերցնում էր տոկոս երեք բուբլի։

Վկայ Մինասեան, որ նոյնպէս փախել է Թիւրքիայից, պաշտպանի հարցին, թէ ինչով էր պարապում Հասանը իր երկրում, պատասխանեց, որ նա պարապվում էր աւազակութեամբ և աւարառութեամբ։

Հարցաքննվում է վկայ Մակուլեան։

Պրօկուրօր։ Ով էր աւազակային խմբերի պետը Բաբերդում։

—Ինքը կառավարութիւնը։

Վկան նոյնպէս փախել է Թիւրքիայից։

Վկաների հարցաքննութիւնից յետոյ դատարանը կարդաց Հասանի մօտ գտնված պարտականների մուրհակները։

Ընդմիջումից յետոյ սկսվեցին վիճաբանութիւնները։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

Բարսում գիւղ, սեպտեմբերի 29-ին

Այս տարի ձախորդութիւնները ամեն կողմից են թափվում մեզ վրա։ Համատարած երաշտութիւնը ինչպէս ամբողջ Կովկասում (նոյն իսկ Կովկասից դուրս), այնպէս էլ մեզ զգալի վնասներ հասցրեց։ Երկարատև երաշտութեանը հետևեց կարկուտը, պակաս մնացածն էլ սա լրացրեց։ Զորացած գետերն ու առուները յորդանալով կատաղեցին ու բազմաթիւ զոհեր կլանեցին։ Սակայն երկինքը ուղարկեց նաև ուրիշ պատիժներ։ Մի քանի տեղեր արդէն սկսված է տաւարացաւը, իսկ մի քանի տեղեր էլ վերջանալու վրա է։ Տաւարացաւը մուտք գործեց և մեր գիւղը, սակայն ոչ այնպէս սոսկալի, ինչպէս էր 1896 թուականին։ Այս թուականը մի դժբաղդ թուական էր Բաժնում և շրջակայ գիւղերի համար, և նրա հասցրած ծանր հարուածները դեռ մինչև այժ էլ զգալի են։ Այս տարի հազիւ փչացած լինեն 10 տաւար։ Բայց ամենից պախարակելին և զզվելին այն է, որ այդ ցաւից ընկած կենդանիներին ժորթում և ուտում են, նոյն իսկ չեն քաշվում հրապարակով վաճառելուց։ Բայց տանուտէրը այդ վնասակար սովորութեան առաջն առաւ։

Սաստիկ տարածված են հիւանդութիւններ նաև մարդկանց մէջ. բարեբախտաբար զոհեր չեն լինում։ Համաբեռ տուն չը կայ, որ հիւանդ չը լինի. այնպիսի տուն կայ, ուր 3—4 հիւանդներ պառկած են մի անկողնում առանց ինամքի։ Հիւանդները պահպանվում են թոյլորովին հակառողջական պայմանների մէջ. առանց արգելքների տրվում են ամեն տեսակ կերակուրներ։ Միակ բժիշկը մեր «դալլաքն» է, իսկ հիւանդների թիւը հասնում է մօտ 150-ի։ Որքան կարևորութիւն կայ մի բժշկի և ինչ բարերարութիւններ կարող էր կատարել նա։ Հիւանդութիւններն են՝ տենդ, փորահարիւք, «սև վէրք» կոչված հիւանդութիւնը և մի ուրիշ հիւանդութիւն, որը որոշել չը կարողացանք։

Գողութիւնների անունն էլ չարժէր տալ։ Այդ խրօնիկական ախտը ամեն տարի կրկնվում է մի և նոյն եղանակով՝ ի մեծ դժբաղդութիւն հայ գիւղերի։ Զարմանալի բան, ամառն անցաւ, հատարեա ոչ մի ուլ չը գողացվեց, իսկ հէնց որ աշունն եկաւ թէ չէ, գիշեր չէ անցնում, որ գողութիւններ չը պատահեն։ Գողերը այնքան յանդգնացել են, որ առանց արգելքի բշում տանում են նոյն իսկ օր ցերեկով, ձեռքներիցն են խլում։ Զուր չէ որ աշունը գալուն պէս գիւղացու սիրտն ուելի սեանում է, որովհետև այդ ժամանակ է զլխաւորապէս պարապ լինում աւազակաբարոյ թուրք ժողովուրդը։ Դարունը հէնց որ բացվում է, թուրքաբնակ ցեղերը սար են գնում, իսկ օգոստոսի վերջերին վերադառնում, անցնում են հայ գիւղերի միջով և ճանապարհին ինչ որ պատահում է՝ քշում տանում են, իսկ երբ տեղ են հասնում, թողնում են ամեն բան և աւազակութեամբ պարապում մինչև մի երկու ամիս։ Քանի քանի գողութիւններ են բռնվել Մօռօլ կոչված թրքաբնակ գիւղում, սակայն անզօր գիւղացին բաւականացել է միայն յափշտակվածի գինը յետ ստանալով, կամ նոյն իսկ երբեմն ոչինչ բաւարարութիւն էլ չը ստանալով։ Մեր կողմերի բոլոր աւազակութիւնների 9/10 մասը կատարում է Մօռօլը։ Տանուտէրն էլ մինչև անդամ իր ձեռքի տակ գողեր ունի, որոնց հետ և կիսում է գողացվածը։ Աւազակութիւն անում են նոյն իսկ փոքրահասակները։ Այդ անզուսպ և աւազակային բնաւորութիւն կրող ժողովրդի հասցրած վնասն ուելի զգալի է Բարսում քան շրջակայ գիւղերում. նախ՝ որ Բարսումը ճանապարհի վրա է գտնվում, և երկրորդ, որ տանուտէրը բաւական թոյլ և անհոգ մարդ է. օրինակ, այս տարի ինչ ապրանք որ գողացվեց՝ յետ չեկաւ. սակայն անցեալ օրը մեր գիւղից և հարևան Զաղիր գիւղից 6 հատ տաւար գողացվեց, որոնց երկուսը տանուտէրին էին։ Հետևեալ օրն և եթ տանուտէրը, հասնելով Մօռօլ, այնտեղ գտնում է հետքը և պահանջում. 3 օր ժամանակ են խնդրում. ամբողջ 3 օր Մօռօլ նստած սպասում է. պատասխանը գալիս է, թէ անկարելի է յետ բերել, որովհետև սահմանն անցրել են։ Մի քիչ բարկանալով, մի քիչ էլ սպառնալով, տանուտէրը 6-ի փոխարէն 7 հատ տաւար է վերցնում, առանց գանգատվելու կամ բարձր իշխանութեանը յայտնելու վերադառնում է։ Արդեօք ժամանակ չէ՞ որ շրջակայ հայաբնակ գիւղերը խնդիր մատուցանեն նահանգապետին և մի առ մի նկարագրեն, թէ ինչ թշուառութիւններ են կրում, և ցոյց տան թէ ինչ կարող է անել տանուտէրը, եթէ կամենայ...

Ց. Երիցեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 10-ին

Տափի-Թաղի Քամոյեանց եկեղեցու երէցփոխ Կ. Զալալեանցի երէցփոխութեան երեքամեայ ժամանակը վաղուց լրացել է։ Այդ մասին ինքը պ. Զալալեանց իր ժամանակին, ինչպէս ընդունված է ընտրողական օրէնքներով, չէ յայտնել ծխականներին և չէ հոգ տարել, որ նոր ընտրութիւն նշանակվի։ Իսկ հոգևոր իշխանութիւնը այս հարցը լռութեան է տուել, չը նայելով որ մի քանի ամիս սրանից առաջ «Մշակի» ներքին լուրերի մէջ հաղորդված էր այդ մասին և մատնացոյց էր արված պատշաճաւոր օրէնսդրութիւնը, որի հիման վրա երէցփոխի լիազօրութիւնն ունի սահման և այդ սահմանից դուրս, առանց նոր լիազօրութեան, ոչ մի երէցփոխ իրաւունք չունի վարել երէցփոխական պաշտօնը։ Երևում է, որ տեղիս հոգևոր իշխանութիւնն ունի իր յարգելի պատճառը կամ շահերը, որ այսքան ժամանակ լռութեան է տուել այդ եկեղեցու երէցփոխութեան հարցը։ Ցանկալի է, որ այդ պատճառը ծխականներն էլ իմանային։

Գործի այս դրութեան մէջ յանկարծ առաջ է գալիս եկեղեցու վերաշինութեան հարցը, որի մասին եկեղեցու քահանաներից մէկը յայտնեց ծխականներին «Մշակի» № 186-ի մէջ։ Եկեղեցու վերաշինութեան ժամանաժողովի անդամ ճարտարապետ Գրիգորեան հոկտեմբերի մէկի ժողովի մէջ առաջարկել է, ինչպէս երևում է յիշեալ նամակից, պակաս անդամների թիւը լրացնել, նկատելով որ շինութեան գործի ծանրութիւնը կը մնայ երէցփոխ Զալալեանցի վրա։ Բայց պ. Զալալեանց իր երեքամեայ երէցփոխութեան ժամանակամիջոցը վաղուց լրացրել է և մօտ երկու տարի վարում է այդ պաշտօնը առանց օրինաւոր իրաւունքի։ Այդ անկանոնութեան դէմ ես բողոքում եմ հրապարակով և հրաւիրում եմ տեղիս հոգևոր իշխանութեան, քանի ուշ չէ դեռ, Քամոյեանց եկեղեցու ծխականներին դուժարել ժողով և ընտրել նոր երէցփոխ, որ կարողանայ օրինաւոր իրաւունքով վարել եկեղեցու ինչպէս ընթացիկ, նոյնպէս եկեղեցու վերաշինութեան գործերը։ Նոյն ժողովում կարելի է ընտրել և երկու պակաս անդամներ շինութեան ժամանաժողովը լրացնելու։

Ժամանակ է, որ մենք սովորենք օրինապահութիւն։ Մխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 4-ին, պ. Գրիգոր Զանչեանի հրապարակախօսական գործունէութեան 25-ամեայ յօբելեանի օրը, յօբելեարը, ինչպէս հաղորդում է «Русскія Вѣд.» լրագիրը, Մոսկվայում չէր։ Այդ օրը շատերը գնացին նրա բնակարանը՝ անձամբ շնորհաւորութիւններ մատուցանելու նրան։ Յօբելեարի անունով ուղարկված են նոյնպէս բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։

—

Հոկտեմբերի 10-ին, կիրակի օր, տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան առաջին կարգի լիազօրների ընտրութիւնը։ Առաջարկված էին քուէարկութեան 50 անձինք, իսկ պէտք է ընտրվէին 24 անձինք։ Ներկայացրած ցուցակներից երևաց, որ միմեանց հետ մրցում էին երկու խմբեր, որոնցից մէկը կազմված էր ընկերութեան տին և ներկայ վարչութեան կուսակիցներից, իսկ միւսը դիմադիր կուսակցութեան անդամներից։ Յաղթութիւնը մեծ մասամբ առաջին խմբի կողմն էր։ Պէտք է սակայն նկատել, որ դիմադիր կուսակցութիւնը միայն մի քանի ձայներով էր թոյլ առաջին խմբից։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային դուման որոշել է բանալ Հալաբարում մի պրոգիմնազիա, յատկացնելով նրա պահպանութեան համար քաղաքային միջոցներից 6,000 բուբլի տարեկան։ Այդ մասին քաղաքային վարչութիւնը միջնորդութիւն էր յարուցել, որին, իբրև պատասխան, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Սանսովսկի յայտնել է, որ անհրաժեշտ է Հալաբարում բանալ ոչ միայն պրոգիմնազիա, այլ նոյն իսկ ամբողջ գիմնազիա, միայն պէտք է որ քաղաքն իր վրա վերցնի ծախսի կէսը, այն է 10,000 բուբլուց մինչև 10,500 բուբլի։ Այժմ քաղաքային դպրոցական յանձնաժողովը որոշել է տալ տարեկան 10,000 բուբլի ուսումնարանական իշխանութեան՝ Հալաբարում պրոգիմնազիա բաց անելու համար։

—

Կիրակի, հոկտեմբերի 10-ին, Աւետեաց Ջրդրաչէն եկեղեցու ծխականները ժողովվել էին նոր քահանայ ընտրելու հանգուցեալ Սարգիս քահանայ Աղաջանեանցի փոխարէն։ Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ թեկնածուների քննութիւնը աւելի նպատակայարմար է կատարել յատուկ յանձնաժողովի միջոցով։ Ժողովը ընտրեց յանձնաժողով, որին յանձնեց ընտրել երկու թեկնածու և առաջարկել ծխականների ընդհանուր ժողովի հաւանութեան։

Սատանայի հետևեալ նոր հրատարակութիւնները. 1) Ա. Կարակաշի մի աշխատութիւնը ֆրանսերէն լեզուով, հետևեալ վերնագրով «Foetus monstrueux humain anencéphale sans fissure spinale et avec bifidité faciale», տպված Պարիզում, բաղկացած 5 երեսից, 2) բժիշկ Սիմէոն Շահ-Նազարեանցի «Երևանի հայոց թեմական հոգևոր դպրանոցը և հասարակութիւնը» գրքոյկը, բաղկացած 32 երեսից, գինն է 30 կոպէկ, 3) նոյն հեղինակի՝ «Ճառ դպրանոցին ներկայանալիս» գրքոյկը, բաղկացած 23 երեսից, գինն է 25 կոպէկ և 4) նոյն հեղինակի՝ «Դպրանոցիս աշակերտներին» գրքոյկը, բաղկացած 14 երեսից, գինն է 20 կոպէկ։

—

Կիրակի օր, ամսիս 12-ին, աբքունական թատրոնում ներկայացրին երկրորդ անգամ «Հուգենոտներ» Մէյէրբէրի օպերան։ Այս անգամ աւելի ավող էին երգում թէ առանձին դերակատարները և թէ երգեցիկ խումբը, որով օպերան անցաւ աչխոյժ և ոչ անցեալ անգամվայ պէս թմրած։ Զուլիանի և Լօնգօբարդի իրանց ամենադժուար դուէտը և վերջին պատկերը հիանալի կատարեցին։ Աբտիստուհի Տիմանինա (թագուհի) իր կոլօրատուր-սոպրանօի ձայնը բաւական փրչայրել է, կարծես շատ բղաւելուց։ Այսօր ներկայացնում են «Князь Игорь»։

—

Հոկտեմբերի 8-ին, ուրբաթ, վրաց մշտական դերասանական խմբի գոյութեան քառասնամեակի առիթով տրված յօբելեանական ներկայացումն գրաւել էր առաջին հասարակութիւն։ Ներկայ էին նաև Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին և Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար Սվէչին։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ցայտնի հրապարակախօս Գրիգոր Զանչեանի 25-ամեակի առիթով այստեղ սկված էր հանդանակութիւն յօգուտ որբանոցների։ Որքան մենք տեղեկացանք—մինչև օրս արդէն ուղարկված է պ. Զանչեանի անունով 305 ր.։ Հանդանակութիւնը դարձեալ շարունակվում է։ Հոկտեմբերի 4-ին, յօբելեանի օրը, այստեղից ուղարկվեց պ. Զանչեանին շնորհաւորական մի հեռագիր»։

—

ԹԷՕԴՕՍԻԱՑԻՑ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրից լսում ենք, որ առաջիկայ նոյեմբերի սկզբներում, հռչակաւոր ծովանկար Ց. Այվազովսկին Բագում ցուցահանդէս է դնելու աւելի քան քսան նկար, որոնց մէջ են՝ յայտնի «Նիագարայ ջրվէժ» նկարը, «Նէապոլի ափերը» և նորերից՝ «Բայրոնը Մխիթարեանների մօտ՝ Վենետիկի ս. Ղազար կղզում» ու «Տրապիզոնի կոտորած» նկարները։ Մի քանի օրից պատկերները ուղարկվելու են Բագու, իսկ ցուցահանդէսի բացումը տեղի կունենայ նոյեմբերի 5—6-ը»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Այստեղ էլ դեռ սեպտեմբերի 19-ին կայացել էր Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողով, վարչութեան հրաւէրով։ Ժողովը միաձայն վճռեց ընդունել նոր կանոնադրութիւնը և յանձնարարեց վարչութեանը աշխատել, որքան կարելի է, շուտով ձեռք բերել թոյլտուութիւն Բաթումում Հայոց Բարեգործական ընկերութիւն ունենալու համար։ Սակայն դեռ վարչութիւնը չէր դիմել նահանգապետին այդ խնդիրքով, երբ ոստիկանապետից ստացաւ առաջարկութիւն վերջացնել հաշիւները և դադարեցնել ճիւղի գործունէութիւնը, համաձայն բարձր իշխանութեան հրամանի։ Վերջին հրամանը, ի հարկէ, կատարվեց, և այժմ տեղիս ճիւղի գոյութիւնը դադարեցրած է։ Այժմ հասարակութիւնը սպասում է, թէ երբ կը հաստատվի նոր կանոնադրութիւնը, որի համար արդէն դիմած եղել է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Temps» լրագիրը, մատնացոյց անելով Թիւրքաց Հայաստանից եկած յուզիչ լուրերի վրա, ասում է, թէ ի նկատի ունենալով այն ցաւալի պայմանները, որոնց մէջ գտնվում է օսմանեան կայսրութիւնը, կարելի է նորից սպասել, որ հայոց հարցը կրկին կը ծագի. այդ հարցը գտնվում է այն վիճակի մէջ, որի մէջ էր 1896 թի կոտորածների ժամանակ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 հոկտեմբերի

ՎԻԵՆՆԱ։ Բօհէմիայի և Մօրավիայի շատ տեղերից հաղորդում են, որ փողոցային մեծ ցոյցեր եղան լեզուներին վերաբերեալ կարգադրութեան

դէմ։ Մի քանի տեղերում այդ ցոյցերը հակասեմիտական բնաւորութիւն էին ընդունում։ Պահանջվեց ժանդարմերիայի և զօրքերի եռանդուն միջամտութիւն։ Իշխանութիւնները յայտարարեցին, որ նրանք ամենախիստ միջոցների կը դիմեն կարգը խանգարողների դէմ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Մակ-Նէյլ դիմում է կառավարութեանը մի հարցապնդումով՝ թէ արդեօք իր ժամանակ քննութեան առարկայ դարձել է Շրէյնէրի և Կապլանդիայի կառավարչական անղամների գործունէութեան եղանակը։ արդեօք թոյլատրված է եղել Միլնէրին արձակել այդ կօլօնիայի մինիստրութիւնը, արձակել օրէնսդրական ժողովը և յայտարարել, որ ներկայումս նա է ընդհանուր պետական իշխանութեան ներկայացուցիչը։ Բալֆուր պատասխանեց, որ հարցապնդումը, ըստ երևոյթին, հիմնված է լրագրական տեղեկութիւնների վրա, որոնք, որքան յայտնի է կառավարութեան, հիմք չունեն։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի ժողով։ Մարկիզ Սօլսբրի կարդաց արքայական հրովարտակը միլիցիան զէնքի կանչելու մասին, առաջարկելով ուղերձ մատուցանել թագուհուն՝ շնորհակալութիւն յայտնելով հրովարտակի համար։ Ուղերձն ընդունվեց, որից յետոյ ժողովը դադարեցրեց նիստերը մինչև հետևեալ հինգշաբթի։

ԿԱՊՇԴԱԴՏ։ Զրահապատ նաւի հետ կռիւ առիթով Բլէմֆոնտէնից ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, Կրիւգէր մի հեռագիր ուղարկեց Շտէյնին, որի մէջ նկատում է, որ գնացքի հրամանատար պօրուչիկ Նէսբիտ և եօթը անգլիացիներ ծանր կերպով վիրաւորված են, մնացած զերիները առողջ են։ Սպանվածներ ամենևին չը կան։

Մաքսային վարչութիւնը այսօր գրաւեց 150,000 սովէրէններ, որոնք նշանակված էին տրանսվաալեան կառավարութեան համար։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Զէմբէրլէն, որին ողջունեցին բարձրաձայն կեցցէներով, ասում է, որ դիմադրական կուսակցութեան գործունէութեան եղանակը մինչև պարլամենտ հրաւիրելը խրախուսիչ ներգործութիւն ունեցաւ։ Կրիւգէրի ցոյց տուած դիմադրութիւնը դժուարացրեց կառավարութեան գործունէութիւնը։ Ստէնդօպի առաջարկութիւնը թոյլ է տալիս քննադատութիւն, և քաղաքավարի քննադատութիւնը ցանկալի է,—բայց միթէ այդ բանը կարելի է ասել Ստէնդօպի երէկվայ ճառի մասին։ Ստէնդօպ ընդմիջում է մինիստրին և բողոքում է «անքաղաքավարի» խօսքի դէմ, որ գործ էր դրվում իր քննադատութեան վերաբերմամբ (բացականչութիւններ դիմադրական կուսակցութեան նստարանների վրա)։ Սպիկէրը ասում է, որ այդպիսի խօսքեր հակառակ են համայնքների ժողովի կանոնադրութեան (բացականչութիւններ. «յետ վերցնել»)։ Զէմբէրլէն յայտնում է, թէ ինքն պատրաստ է յետ վերցնել այն, ինչ որ հակառակ է համայնքների ժողովի ներքին կանոնադրութեան, բայց չէ կարող կատարել Ստէնդօպի պահանջը՝ կարդալ Տաուկէլի նամակը։ Եթէ որ Կէմպբէլ Բանէրման կամ Հարկօրտ Նոյնպիսի մի պահանջ անէին, նամակը կը ներկայացնվէր, որովհետև այդ անձինքը ոչ միայն համայնքների ժողովի յարգելի անդամներ են, այլ և մի և նոյն ժամանակ ազնիւ մարդիկ են։ Ստէնդօպ կրկին անդամ բողոքում է։ Սպիկէր առաջարկում է, որ վերջին խօսքերի մէջ նա վիրաւորանք չէ տեսնում։ Զէմբէրլէն, շարունակելով ասում է, որ հարաւ-աֆրիկական լիգան ոչ մի կապ չունի կառավարութեան հետ, թէպէտ և նոյն նպատակներին է դիմում։ Բօդսի հետ, Զէմսոնի արշաւանքի ժամանակից, ինքն յարաբերութիւններ չէ պահպանում Հարաւային Աֆրիկայի գործերի վերաբերմամբ, այլ նրա հետ բանակցութիւններ էր վարում միայն երկաթուղիներ կառուցանելու և Բօդէզիի առաջադիմութեան մասին։ Ի նկատի ունենալով վերջին անցքերը և Կրիւգէրի ճառերը, նա այն եզրակացութեան եկաւ, որ պատերազմը անխուսափելի է։ Նա յոյս ունէր խաղաղութեան վրա, ձգտում էր դէպի նա մինչև վերջին բօպէն, հաւատում էր խաղաղութիւն պահպանելու հնարաւորութեան, բայց Անգլիան միշտ պատրաստ է եղել ապահովել իր հպատակներին, որպէս զի նրանց հետ արդարացի կերպով վարվեն, և աշխատել է առաջաւոր պետութեան դրութիւն գրաւել Հարաւային Աֆրիկայում, ի նկատի ունենալով մի և նոյն ժամանակ ոչ թէ պօրտուգալական և գերմանական կօլօնիաները, այլ երկու հանրապետութիւնները։ Խաղաղութիւնը կախված էր այն բանից, որպէս զի կառավարութիւնը պատասխանատուութիւն յանձն առնէր թէ բրիտանական հպատակները կախումն ունեցող դրութիւն ունեն Տրանսվաալում։ Պատերազմը չէ կարող սաստկացնել ցեղական հակառակութիւնը, որ հիմնված է փոխադարձ արհամարհանքի վրա, իսկ խաղաղութիւնը չէ կարող հիմք դնել, մինչև որ սպիտակ ցեղերը կը սովորեն յարգել միմեանց, և դիմադրական կուսակցութիւնը,—տեսնելով որ դիպլոմատիական բոլոր միջոցները անհետևանք մնացին,—ստիպված կը լինէր դիմել ոյժին։ Տրանսվաալը միշտ աշխատում էր ազատվել վնասակարական իշխանութիւնից։ Նը-կատելով, որ այդ բանը անպատիժ է անցնում, նա գնալով հավարձակ էր դառնում, ինտրիգներ էր լարում արտասահմանում և զինաւորվում էր, այնպէս որ վերջերս ամենազօրեղ պետութիւնը դարձաւ Հարաւային Աֆրիկայում։ Անգլիան առաջուց խուսափեց աւելի էլ մեծ վտանգից։ Հռետորը կրկին անդամ պատմում է վերջին բանակցութիւնները Տրանսվաալի հետ և այն կարծիքն է յայտնում, թէ այն բանից յետոյ, որ Տրանսվաալը ընդունեց երկրի մէջ հինգ տարի ապրելու ժամանակամիջոցը, ասպարէզ եկան ազդեցիկ խորհրդատուներ։ (Նա այդ ժամանակ չէ ակնարկում, որ օտար պետութիւնները դրդեցին Տրանսվաալին յետ վերցնել այդ առաջարկութիւնը)։ Անգլիան անսահման համբերութիւն ցոյց տուեց, և եթէ, վերջ ի վերջոյ, համաձայնվեց կռիւ սկսել, այդ այն հանգամանքով արեց, թէ դա արդարացի կռիւ է։ (Հաւանութեան բացականչութիւններ)։ Զէմբէրլէնի ճառը շարունակվեց 2½ ժամ։ Նրանից յետոյ, երբ Զօն Մօրլէյ և Կօրանէյ յարձակումների ենթարկեցին կառավարութեան քաղաքականութիւնը, իսկ Բալֆուր նրան պաշտպանում էր, համայնքների ժողովը, 361 ձայնի մեծամասնութեամբ (35-ի դէմ, մերժեց Ստէնդօպի առաջարկութիւնը—դժգոհութիւն յայտնել կառավարութեանը այն բանի համար, որ նա գործը հասցրեց պատերազմի հարաւ-աֆրիկական հանրապետութեան հետ։ Ապա ուղերձն ընդունվեց։

ԿԻԵՎ։ Երէկ մի խորհրդաւոր սպանութիւն կատարվեց. քաղաքի կենտրօնական մասի մէջ գտնվող տան բնակարանի երրորդ յարկում մահճակալի տակը գտնված է, խեղդվածի նշաններով, բնակարանի 20 տարեկան տանտիկինը, Կսէնիա Ալպէնիկովա, որը երեք տարի առաջ աւարտել է դիմնազիա։ Աղախինը փախել է. կարծում են, որ յափշտակված են ժամացոյցը և 100 ռուբլի։ Այդ կինը ապրում էր բնակարանում, որ վարձել էր նրա համար տեխնիկան մի խոշոր ֆիրմայի ներկայացուցիչը։ Այս օրերս այդ հովանաւորը գործով գնաց արտասահման։

Կիևից 5 վերստ հեռաւորութեան վրա, աղիսի գործարանում, չարագործների մի խումբ, հոկտեմբերի 6-ին, գիշերը, յարձակվեց կառավարչի տան վրա։ Չարագործները, դիմակաւորված, հրացաններ են արձակել։ Սպանված է մի բանւոր, ոք քնած է եղել կառավարչի սենեակում։ Կառավարիչը ազատվել է չարագործների ձեռքից։ Չարագործները չեն գտնվել. կատարվում է քննութիւն։

ԿԱՊՇԴԱԴՏ։ Բօէրների բազմաթիւ զօրքը յարձակում գործեց Գլէնկէի բանակի վրա. այժմ կռիւը տեղի ունի ամբողջ դծի վրա։

ԼՕՆԴՕՆ։ Երէկվան լրագիրներում տպված է հեռագիր Գլէնկէի մօտ գտնվող բանակից, որը հաղորդում է, թէ բօէրների դիրքը գրաւվեց. խլեցին հինգ թնդանօթներ։

«Բէյտէրի գործակալութեան» տեղեկութիւնների համեմատ, զինուորական մինիստրը հեռագիր է ստացել, որ գեներալ Սէյմօնս, զօրքերի հրամանատարը Գլէնկէի մօտ, վիրաւորված է։ Գլէնկէի վրա յարձակվող բօէրների թիւը 6000 էր։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական հեռագիրը Լէդի-Սմիթից, հոկտեմբերի 8-ից, հաղորդում է, Գլէնկէից ստացված տեղեկութիւնների համաձայն, որ երկու հետևակ գունդ յարձակում գործեցին այն բլրի վրա, որի վրա գտնվում էր թնդանօթաձիգ զօրքը։

Խուզարկու պահակները հաղորդում են, որ 9000 բօէրներ գնում են դէպի Գոստենպրոյտ. նրանց դէմ ուղարկվեց անգլիական բատարէյա։

ԼՕՆԴՕՆ։ «Daily News» լրագրին հեռագրում են Կապշտատդից, հոկտեմբերի 6-ից, որ Մէֆկինգի վրա բօէրների յարձակման ժամանակ պայթեց քաղաքի պաշտպանութեան համար դրված մելինիտեան ականը, այնպէս որ սպանվեցին 1500 բօէրներ։

Կ. ՊՕԼԻՍ։ Հոկտեմբերի 11-ին խոստացված իրադէն, որով բաւարարութիւն է տրվում հայոց ցանկութիւններին, երէկ Բ. Դուռը պաշտօնապէս ուղարկեց հայոց պատրիարքարանը։

ՏՕԼԷԴՕ։ Կասկածելի հիւանդութեան 230 դէպքեր են եղել Կվէրս գիւղում։ Մինչև այժմ մեռնողներ չեն եղել։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Զօն Մօրլէյ պախարակում է կառավարութիւնը, որ դերակշռող դրութեան պատրուակով, կառավարութիւնը աշխատում էր Տրանսվաալի վրին կապել այնպիսի պարտաւորութիւններ, որոնց նա չէր կապի ինքնավարութիւն վայելող որ և է կօլօնիայի վրին։ Զէմբէրլէն ընդմիջում է հռետորին և նկատում է, որ եթէ ինքնավարութիւն վայելող կօլօնիան փորձ փորձէր վարվել անգլիական հպատակների հետ այնպէս, ինչպէս բօէրները վարվում էին այդ հպատակների հետ, այն ժամանակ նա կը միջամտէր գործին։ Մօրլէյ առարկում է, որ երբէք Զէմբէրլէն այդպէս չէր վարվի Կանադայի հետ։ Հռետորը շարունակում է խօսել։ Քանի որ Անգլիան խառնվեց այդ դժբաղդ պատերազմի մէջ, ինքն յոյս ունի, որ պատերազմը շուտով կը վերջանայ։ Գլխաւոր առարկութիւնը կառավարչական քաղաքականութեան դէմ այն չէ, թէ դա պատերազմական քաղաքականութիւն է, այլ այն, թէ Անգլիան, որքան էլ յաղթող լինի նա, դէմ առ դէմ պէտք է կանգնի սրանից յետոյ ոչ-շահաւէտ բարդութիւնների հետ։ (Ծափահարութիւններ դիմադրական կուսակցութեան նստարանների վրա)։ Օգոստոսին Զէմբէրլէն յայտնեց, որ պատերազմները բէֆօրմներ են ստեղծում, կաթիլ առ կաթիլ, որպէս քաւվող լիմոնը, բայց նա իր առաջարկութիւնների հետ այնպիսի պայմաններ էր դընում, որոնք, ինչպէս յայտնի է, անհնարին են։ Այսօր Զէմբէրլէն ասեց, թէ իր հեռագիրը օգոստոսի 28-ից այնպէս հասկացան, որ իբր թէ Անգլիան ընդունեց Կրիւգէրի առաջարկութիւնները։ Քանի որ Զեմբերլէն այն հաւոզման եկաւ, որ իր հեռագիրները չեն հասկացել, ուրեմն ինչու նա չը բացատրեց այդ հեռագիրների միտքը նրանց, և այդ ամօթալի պատերազմի առաջը չառաւ։ Ստէնդօպի առաջարկութիւնը հիմնաւոր է և ինքն ձայն կը տայ այդ առաջարկութեանը, որովհետև ինքն գիտէ, որ մի քանի ամսից յետոյ անգլիական ժողովրդի առողջ բանականութիւնը կը դրդի նրան յայտնել իր սէրը դէպի արդարութիւնը և իր ատելութիւնը դէպի անօգուտ պատերազմները։ Բօզբէրրի միայն աւելացրեց աղատամիտների դժուարութիւնը։

Բօզբէրրի անուան յիշելը ծափահարութեամբ ընդունվեց մինիստրական կուսակցութեան կողմից, իսկ աղատամիտներից—շոյներով. Մօրլէյ այն եզրակացութեան է գալիս, որ պատերազմը սկսված է վրէժխնդրութեան զգացմունքը գոհացնելու համար, և այդ պատճառով պէտք է ընդունել Ստէնդօպի առաջարկութիւնը։ Մօրլէյից յետոյ կառավարութեան քաղաքականութեան դէմ խօսեց Կոնտրէյ։ Բալֆուր, պատասխանելով Մօրլէյի պախարակման, թէ պատերազմը սկսվեց վրէժխնդրական զգացմունքից դրդված, ասում է, որ պատճառներ չը կան խօսելու Մաիւբդ-Հօլլէի մասին, ուր տեղի ունեցաւ փոքրիկ գործ, որի վրա կարելի է ամենևին ուշադրութիւն չը դարձնել (ծափահարութիւններ)։ Դժբաղդ պատերազմի պատճառը ոչ թէ մի որ և է նախադասութիւնն է եղել հեռագրի մէջ, այլ Տրանսվաալի հասարակական կարծիքի ղեկավարի վճիռը՝ խուսափել յամենայն դէպս դրութեան այնպիսի վախճանից, որի հետ կապված լինէր այժմեան կառավարչական սիստեմի փոփոխութիւնը։ Պատերազմի պատճառը Տրանսվաալի մի նախատածած դիտաւորութիւնն էր՝ ամեն կերպ խուսափել անգլիական հպատակներին ընտրողական իրաւունքներ շնորհելուց։ Նա կը-կին անդամ յիշեցնում է համայնքների ժողովի անդամներին այն բանը, որ պատերազմը նախամտածած դիտաւորութեամբ է սկսված։

9 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ։ «Standard» լրագրում հրատարակված է Գլէնկէի մօտ գտնվող բանակից, հոկտեմբերի 8-ից, կէս օրից յետոյ ստացած հեռագիրը հետևեալ բովանդակութեամբ. «Բրիտանական թնդանօթները ռմբակոծում էին բօէրներին 2500 եարդ տարածութիւնից աւելիչ կրակով, և երբ թագաւորական հրացանաձիգների զօրախումբը մօտեցաւ մինչև 1000 եարդ, բօէրների թնդանօթները բոլորովին լռեցին. թշնամին այնու ամենայնիւ շարունակում էր սաստիկ հրացանաձգութիւնը, որից անգլիական զօրքի շարքերը նուազում էին։ Առաւօտեան 9 ժամին մօտ, հետևակ զօրքը և հրացանաձիգները շուտով բարձրացան բլրի վրա և բօէրները փախուստ տուին. այդ միջոցին հուսարների գունդը, ամբողջ հեծելազօրքը, կօլօնիական և կայսերական հետևակ զօրքերը, նաև լէյստերինեան գունդը առաջ գնացին դէպի հիւսիս և արևելք, որով և կտրեցին բօէրների յետ քաշվելու գլխաւոր ճանապարհը։ Թշնամին մնաց երկու կրակի մէջ և մեծ կորուստ ունեցաւ։ Հեռագիրը ուղարկելու բօպէին դեռ կռիւը շարունակվում է, բայց թշնամու պարտութիւնը կործանիչ է. հաւանական է, որ բօէրներից շատ քչերը կազատվեն։ Մեր կորուստը հասնում է մօտ 300-ի, սպանված և վիրաւորված։ Բօէրների կորուստը երեք անգամ աւելի է։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղ հաղորդում են սպանված ու վիրաւորված օֆիցէրների ցուցակը. գեներալ Սէյմօնս ժամացու վերը է ստացել, տասնմէկ օֆիցէրներ սպանված են, որոնցից՝ երկու գընդապետ, մէկ մայոր, երեք կապիտան, հինգ պօրուչիկներ. երեք օֆիցէրներ ծանր վիրաւորված են՝ գնդապետը, մայորը և կապիտանը. թեթև վերը ստացել են 17 օֆիցէրներ, որոնցից՝ երկու մայոր, հինգ կապիտան և տասը պօրուչիկներ։

ԿԱՊՇՏԱՏԴ։ Տրանսվաալի ստատս-սեկրետար Բէյց դիմեց Օրանժեան հանրապետութեան քաղաքացիներին մէկ մանիֆէստով, որի մէջ մեղադրում է Վիկտօրիա թագուհուն, Մեթներին և անգլիական գործիչներին այն բանի մէջ, որ նրանք խաբում և վիրաւորում են աֆրիկանդէրների ազգը։ Մեծ Բրիտանիան ճնշում է տեղացիներին։ Պատերազմը սկսվել է երկու տարվայ զանազանութեան պատճառով, ընտրողական իրաւունք տալու համար, այն ինչ Անգլիայում բնակվող օտարերկրացիները ստիպված են սպասել 12 տարի, մինչև որ կը ստանան ձայնի իրաւունք։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական տեղեկութիւնից երևում է, որ Գլենկէի մօտ եղած պատերազմի ժամանակ անգլիացիների կողմից սպանված են 31 մարդ, վիրաւորված—151։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ 200 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 35-ի, որոշվեց լրացուցիչ կրէդիտ 35,000 մարդ զէնքի կանչելու համար, որոնց պահանջում է զինուորական մինիստրութիւնը։ Հինգ փոխադրող նաւեր զինուորներով ճանապարհ ընկան այսօր Սաուտհամպտոնից։ Գեներալ Ուլսլէյ այցելեց զօրքերին ճանապարհ ընկնելուց առաջ։

ԼԷԴԻ-ՍՄԻԹ։ Կարաբիներները և հրացանաձիգ զօրքերը, որոնք երէկ ամբողջ օրը պատերազմի մէջ էին, վերադարձան այսօր այստեղ։ Նրանք ստիպված եղան յետ քաշվել, որովհետև նրանց դէմ կանգնած էին մօտ 2000 բօէրներ, և քիչ էր մնում որ նրանք միմեանցից անջատվէին։ Բայց Մակսիմի թնդանօթները կանգնեցրին թշնամու հետամտութիւնը։ Տեղացիները հաղորդում են, որ սպանվել են 16 բօէրներ։ Բրիտանացիների կողմից թեթև կերպով վիրաւորվել է մէկ մարդ, անհետացել է մէկ օֆիցեր։ Բօէրների մէջ նկատելի են ձիաւոր բազուտներ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովում Ուայտհէմ կարդաց Լէդի-Սմիթից ստացված պաշտօնական հեռագիրը։ Նրա մէջ ասված է, որ «լուսաբացին Գլէնկէի մօտ գտնվող բանակը յարձակման ենթարկվեց 400 մարդու կողմից։ Զորս թէ հինգ թընդանօթ դրված էին բլրի վրա և սկսեցին գցել մեր բանակի վրա ռումբեր, բայց քիչ վնաս հասցրին։ Մեր հետևակ զօրքը յարձակում գործեց թշնամու բռնած դիրքի վրա։ Սաստիկ կռիւից յետոյ, որ տևեց մինչև ցերեկվայ ժամի 1½-ը, համարեա անմատչելի դիրքը գրաւվեց։ Թշնամին յետ քաշվեց արևելեան ուղղութեամբ։ (Բարձրաձայն հաւանութիւն)։ Մեր հեծելազօրքը և արտիլէրեան դեռ կռիւի մէջ չեն մտել. մեր կորուստները ծանր են։ Գեներալ Սէյմօնս վիրաւորված է ծանր կերպով։

ՊԱՐԻԶ։ Բերանժէ վերաստուգեց Գերենի առաջ Շաբրօլ բերդի թղթերը։

Գնդապետ Շնէյդեր վախճանվեց։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովը 271 ձայնի մեծամասնութեամբ ընդդէմ 22-ի ընդունեց 10,000,000-ի լրացուցիչ կրէդիտը։ Վիճաբանութիւնների միջոցին Բալֆուր կարդաց հեռագիր, թէ գեներալ Սէյմօնս ժամացու վերը է ստացել Գլէնկէի մօտ տեղի ունեցած կռիւի ժամանակ։ Համայնքների ժողովի անդամները գլխարկները հանեցին։ Վիճաբանութիւնները ընդհատվեցին։

Այստեղ, չը հաստատված, լուր է տարածվել, որ կառավարութիւնը մտադիր է պատերազմից յետոյ հինգ դաշնակցական նահանգներ կազմել—Կապ, Տրանսվաալ, Նատալ, Օրանժեան հանրապետութիւն և Բօդէզիա, դաշնակցական պարլամենտով Կապշտատդում։

10 հոկտեմբերի

ՐԻՕ-ԴԷ-ԺԱՆԷՅՐՕ։ Տասը օր առաջ Սանտոսում տեղի են ունեցել կասկածելի հիւանդութեան դէպքեր, որոնցից երեքը մահով է վերջացել։ Բժիշկների կարծիքը հիւանդութեան բնաւորութեան մասին տարբերվում է։ Մեծամասնութիւնը պնդում է, որ դա ժանտախտ չէ և որ վարակիչ հիւանդութեան առաջը կարելի է առնել։

ՊԱՐԻԶ: Բերանժէ լսեց Բարելիէին, Դերուլէդին և Սեբրանին, և աւարտեց քննութիւնը: Երեքշաբթի, հաւանական է, որ նա ներկայացնէ իր զեկուցումը յանձնաժողովին:

ԴԱՐՄՇՏԱՏ: Վոլֆի գործակալութիւն: Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, հեսենեան մեծ դուքսը և մեծ դքսուհին, նաև յունաց արքայորդի Նիկոլայ, ներկայ էին հոկտեմբերի 20-ին (8-ին), երեկոյեան, 24-րդ դրագունների գնդի նոր օֆիցէրական ժողովարանի բացման առիթով տուած ճաշկերոյթին: Այդ գնդի առաջին շէֆը Թագաւոր Կայսրն է: «Darmstater» լրագրի ասելով, Թագաւոր Կայսրը ընդունեց երէկ բաւարեան իր գնդի հրամանատար բարոն ֆոն-Ռոտէնբուրգին:

ԼՕՆԴՕՆ: «Ռէյտէրի գործակալութիւն»: Առաւօտեան լրագիրների ասելով, գեներալ Սէյմոնս վախճանվեց:

«Central News» լրագրին հեռագրում են Գլէնկէից, որ, վերջին տեղեկութիւններին նայելով, բօէրների կորուստը շատ քչով է աւելի անգլիականից: Բօէրները յետ նահանջեցին կատարեալ կարգապահութեամբ:

Հաւասի գործակալութիւն: «Liberté» լրագիրը հաղորդում է Պրէտորիից ստացած հեռագիրը այն բանի մասին, որ Օրանժեան հանրապետութեան զօրքերը կռիւ սկսեցին անգլիացիների հետ Բեստէր կայարանի մօտ: Անգլիացիք կատարելապէս ջարդվեցին և փախան դէպի Լէդի-Սմիտ, թողնելով պատերազմի դաշտի վրա բաւականաչափ զինուորական նիւթեր:

ԼՕՆԴՕՆ: Ռէյտէրի գործակալութիւն: Լրագիրների արտակարգ հրատարակութեան մէջ հրատարակված է հետևեալ հեռագիրը Գլէնկէից. «Հոկտեմբերի 8-ին, երեկոյեան, մեր հեծելազօրքը, հետամուտ լինելով բօէրներին, կէսօրից յետոյ հանդիպեց թշնամու երկրորդ, աւելի թաղամաթիւ, զօրախմբին: Սկսվեց կռիւ, որը շարունակվում է դեռ մինչև այժմ»:

Հոկտեմբերի 9-ից Կապշտադտից ստացած հեռագրին նայելով, բօէրները ջարդվել են Ելանդլսլաագտէի մօտ և յետ են քաշվել դէպի Վէյլբանկ, որտեղ մտադրութիւն կայ վաղը յարձակում գործել նրանց վրա:

Պաշտօնական հեռագիրը Լէդի-Սմիտից, հոկտեմբերի 9-ից (երեկոյեան 8 ժամ 45 րոպէին) հաղորդում է, որ հեծելազօրքը, թնդանօթաձիգները և հետևակ զօրքերը, Ֆրէնչ գեներալի հրամանատարութեամբ, առաւօտեան 4 ժամին դուրս եկան դէպի Մօղդերիջ: Գեներալ Ուայտ գնաց ետևից: Երեկոյեան 5 ժամին անգլիացիք լուեցրին թշնամու երեք թնդանօթները, որ գտնվում էին Ելանդլսլաագտէի մօտ: Երեկոյեան 7 ժամ 45 րոպէին բրիտանական զօրքերը գրաւեցին թշնամու դիրքը, նրա բանակը, ձիաները և բեռը: Հեծելազօրքը հետամուտ եղաւ թշնամուն: Լուրերին նայելով, բրիտանական մի քանի զինուորներ վիրաւորված են, բայց մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն: Առաւօտեան թշնամու ոյժը հաշվում էր մօտ 1000 մարդ, կէսօրից յետոյ սպասվում էր նորից 1000 մարդ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ,—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2 ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.

Ա. Ն ՇԳԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեքտրաբուժութիւն), վենէրական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Տ. Ի. ԼՈՒԴԵՆԿՕ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խրի, արեան և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մասնամասնագիտութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
38—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Տպվում են և մինչև ամսիս վերջը լույս կը տեսնեն

I «ԿԱՐԳ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ»

Դասագիրք աղջային և պետական ուսումնարանների համար

Երրորդ փոփոխած տպագրութիւն

34 ընտիր նկարներով (Լայպցիգում պատրաստված):

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊԷԿ

—

II Առաջին հայերէն «ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ»

12-րդ տարի

Հարուստ ժամանակագրութեամբ, ընտիր թղթի վրա.

Գինը 50 կոպէկ, դուսարով զէջումն:

—

Մամուլի տակ է

III „ԼՈՒՄԱՅ“

Գրական հանդէս 1900 թ. առաջին գիրքը և կը հրատարակվի յունվարի 1-ին:

Տարեկան՝ 3 բուբլի:

—

Շուտով կը տպագրվի

IV Ց. ՊԱՐՈՆԵԱՆԻ երկասիրութիւնների III հատորը

«ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԵՍՆԵՐԸ»

Վաղօրօք ստորագրվողը վճարում է 60 կոպէկ:

—

Բացված է բաժանորդագրութիւն

V «ԴՐԻԱՆ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

ժողովածուի հինգերորդ գրքի.

Գինն է 3 բուբլի:

Գլուա ա. քակ. Աղանեանց
1—2



ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

իր ամառվայ բնակարանից տեղափոխվեց ձմեռվայ բնակարանը, կիրակի օր, ամսիս 10-ին: 2—2

Հ. Աւետիք Կոյլաւի

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՑԵՐԷՆ ԱՄԵՆԱՑԱՑՏԻ

ԲԱՌԳԻՐՔԸ

1667 էջ, գինը, 10 բուբլի, ծախվում է 5 բուբլիով Ա. Խուդավերդեանի մագազինում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա: Օտար քաղաքացիք պէտք է վճարեն 50 կոպ. պօստային ծախս, իսկ վերադիր վճառով պահանջողները պէտք է ուղարկեն 2 բուբլի: 6—15

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ երկրորդ իգական գիմնազիայում բացվել են հանգուցեալ ստատսկի-սովէտնիկ Եակով Սօլոմոնովիչ Աբէսալոմովի անուան երկու թոշակ:

Կանոնադրութեան 3 և 4 յօդ. համաձայն, այդ թոշակներով կարող են օգտվել գիմնազիայի այն չքաւոր աշակերտուհիները, որոնք ծնվել են Թիֆլիսում և ռուս կամ հայ են:

Թոշակ նշանակելու համար պէտք է դիմել խնդիրքով Քաղաքային Վարչութեան, կցելով խնդիրքին՝ ծննդական վկայական, կամ վաւերացրած պատճէնը և ուսումնական վարչութեան վաւերագիրը այն բանի մասին, թէ աշակերտուհին, որի համար խնդրվում է թոշակ, ուսանում է յիշեալ գիմնազիայում:

Խնդիրքները ընդունելու վերջին պայմանաժամը լրանում է հոկտեմբերի 26-ին:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 հոկտեմբերի ՄԻՆԴԷԼԻԱ շոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, մամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Թօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուխաֆեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիոր Հերշենսրոդերին: (Ե. Հ. Չ.) 11—20

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլովինսկի Պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու:



Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզօնի համար՝

Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ:

Ստացված է նոյնպէս ՖՕՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ.— դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և բէալական ուսումնարանների:

Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Գները ՎԵՐԶՆԱԿԱՆ են և անհամեմատ էժան:

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի 1/6 մասը: 12—40

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թի աշնան և 1900 թի գարնան ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տարեկան ամենաընտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, վշտաղալար և տերևազարդ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ:

(Ե. Հ. Չ.) 2—40

Բացված է գործարանական պահեստ թղթեղէնների

Գ. Ի. ՊԱԼԼԻԶԷՆ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԲԹԵՎՍԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՕՉԷԼԷՎՍԿԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պահեստը գտնվում է Թիֆլիսում, Գօլովինսկի պրոսպէկտի և Գէօրգիէվսկայա փողոցի անկիւնում, տուն Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցու: 6—10

Եղբարք Ե. եւ Մ. Միրզաբէկեանցների

ԾԽԱԽՈՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԳԻՈՒՄ

Ի նկատ առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է, մենք, որպէս զի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վերոհեցինք Թիֆլիսում (Հալաբարի կամուրջի մօտ, տուն Խաբլովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները: Շնորհիւ այդ պահանջի, մենք հնարաւորութիւն ունենք ամենաընտիր պապիրոսներ և ծխախոտ ծախել աւելի էժան գներով:

Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են՝ Тифлисъ, табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.

Պատուէրները կատարվում են ճշդութեամբ և շուտ: 7—10

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Октября 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.